

# President's Message

April 23, 2019

Armenian Canadian Medical Association of Ontario

## Միքելի Անդամներ՝

Օնթարիոյի Հայ Գանատական Բժշկական Միութեան (Armenian Canadian Medical Association of Ontario) 2019-ը տարեշրջանի նորընտիր վարչութեան անունով, կ'ուզեմ ողջունել մեր բոլոր անդամներուն, աջակիցներուն և համակիրներուն:

24 Փետրուար, 2019-ին տեղի ունեցաւ Օնթարիոյի Հայ Գանատական Բժշկական Միութեան 2019-ի ընդհանուր ժողովը, ուր ընտրուեցաւ մեր նոր վարչութիւնը, հետեւեալ կ'ազնով՝

- Տոքթ. Գրիգոր Պէպեճեան (ատենապետ)
- Տոքթ. Գայանէ Հովհաննիսյան (փոխ ատնպատ.)
- Տոքթ. Հուրի Միմոնեան (քարտուղար)
- Տոքթ. Մասիս Աշրք (գանձապահ)
- Տոքթ. Ճոզէֆ Քոյունձեան (հաշուապահ)
- Տոքթ. Ռոճէր Գաբրիէլեան (խորհրդական)
- Տոքթ. Նատալի Ադավեյան (խորհրդական)
- Տոքթ. Քրիստիան Թերնամեան (խորհրդական)
- Տոքթ. Զորի Գալստանյան (խորհրդական)
- Տոքթ. Լենա Պոտաքեան (խորհրդական)
- Տոքթ. Ճեննիֆըր Շիթիլեան (խորհրդական)

Անցնող տարեշրջանին, Օնթարիոյի Հայ Գանատական Բժշկական Միութիւնը թեւակոխեց անկլինադարձային տարի մը՝ հիմնադրութեան 30րդ ամեակը:



Օնթարիոյի Հայ Գանատական Բժշկական Միութիւնը հիմնադրուած է 1988-ի Դեկտեմբերին, Հայաստանի մեջ պատահած ողբերգական երկրաշարժի օրերուն, երբ խումբ մը մտահոգ, հոգածու և ազգասէր հայ բժիշկներ նախաձեռնեցին օգնութեան ձեռք երկարել երկրաշարժի աղետէն վնասուած մեր հայրենի ժողովուրդին:

Դժուարին օրերուն կեանքի կոչուած այս միութիւնը, 30 տարիներ գործած է և կը շարունակէ գործել հայ ժողովուրդի առողջապահական բարօրութեան համար:



Անցնող տարեշրջանին միասնաբար տօնեցինք Օնթարիոյի Հայ Գանատական Բժշկական Միութեան 30րդ տարեդարձը: Տեղի ունեցաւ յոբելեանական հանդիսութիւն (Gala) և համագումար (Symposium), որոնց ընդմէջէն որպէս պատասխանատու միութիւն վերահաստատեցինք մեր նուիրումը անցեալի խոստումներուն, պատուեցինք մեր մեծերը և ծառայասէր երեցները, և ամենէն կարեւորը՝ փոխանցեցինք մեր ծառայութեան ջահը մեր նոր սերունդներուն:



Այստեղ կ'ուզեմ վարչութեանս անունով մեր սրտագին երախտագիտութիւնը յայտնել մեր բոլոր անդամներուն, նուիրատուներուն, մեկենասներուն և բոլոր անոնց, որոնք ջանք չի խնայեցին և մեր կողքին կանգնեցան իրականացնելու մեր յաջողութիւնները:

Շնորհակալութեան յատուկ խօսք ունիմ նաեւ փոխանցելու մեր անցեալ տարուայ շրջանաւարտ վարչութեան բոլոր անդամներուն, ձեր վարձքը կատար և ձեր ուժը անսպառ:



Միբեղիներ, այս տարի եւս միասնաբար պիտի շարունակենք քայլել այս բարեսիրական և մարդկային նոյն ուղիով, պիտի ծառայենք մեր հայ ժողովուրդի բոլոր գաւակներուն ըլլայ այդ Օնթարիոյի մեր հայ համայնքին թէ Հայաստանի մեր հայրենակիցներուն և կամ մեր շատ սիրելի հպարտ Արցախի հանրապետութեան հայրենակիցներուն:

Յաջորդ տարուան համար, միութիւնս որոշած է իր ջանքերը կեդրոնացնել ներգաղութային առողջապահական զարգացման ոլորտին շուրջ, ինչպէս նաեւ պիտի նախաձեռնէ ընկերային և յարաբերական զանազան միջոցառումներ, աւելի մտերիմ և սերտ կապեր հաստատելու համար առողջապահական մարզի մէջ բոլոր հայ մասնագետներու միջեւ:

Յարգելի անդամներ,

Մեր անցեալի յաջողութիւնները մեզ կը պարտադրեն ըլլալ պատասխանատու և գիտակից մեր ներկայի և ապագայի աշխատանքներու գործընթացին մէջ: Մենք կը հաւատանք, որ բոլորս միասին պիտի շարունակենք մեր աշխատանքը աշխոյժ և եռանդուն, և միասնաբար ձեռք պիտի ձգենք նորանոր յաջողութիւններ և պիտի նուաճենք նորանոր բարձունքներ յանուն մեր ժողովուրդի առաւել առողջութեան և բարորութեան:

Ի սրտէ յաջող երթ կը մտաբան մեր սիրելի միութեան աշխատանքներուն:

Յարգանքով՝

Տոկոթ Գրիգոր Պէպէճեան  
Ատենապետ Օնթարիոյի Հայ Գանատական Բժշկական Միութեան (ACMAO)

Dear Members,

On behalf of the 2019 Armenian Canadian Medical Association of Ontario (ACMAO) Executive Board Members, I am honoured and pleased to greet you, friends, supporters and members of ACMAO.

ACMAO's 2019 Annual General Meeting took place on February 24th, 2019, where this year's Executive Board Members were elected:

Dr. Krikor Bebedjian, President  
Dr. Gayane Hovhannisyan, Vice President  
Dr. Houri Simonian, Secretary  
Dr. Masis Asik, Treasurer  
Dr. Joseph Kayoumedjian, Accountant  
Dr. Roger Kaprielian, Advisor  
Dr. Natalie Aghavelyan, Advisor  
Dr. Christian Ternamian, Advisor  
Dr. Zori Galstanyan, Advisor  
Dr. Lena Boudakian, Advisor  
Dr. Jennifer Chitilian, Advisor

The year 2018 was a milestone year, marking the 30th anniversary of the foundation of ACMAO.

ACMAO was founded in December 1988 in response to the tragic earthquake that affected Armenia. A group of caring, compassionate and dedicated doctors were determined to extend a helping hand to the people of Armenia affected by this unfortunate disaster.

To this day, after 30 years since its foundation, ACMAO continues to serve for the health and wellbeing of the Armenian people.



On November 24th, 2018, ACMAO hosted two important functions to mark its 30th milestone anniversary: an informative symposium and a celebratory gala. The gala was dedicated to celebrate 30 years of achievements, honour dedicated Armenian health care professionals, and pass on the torch to the new generation to carry out future projects and to continue to fulfill ACMAO's mission.

On behalf of the 2019 Executive Board Members, I would like to express our deepest gratitude to all of ACMAO's members, supporters, sponsors and volunteers for your ongoing support and dedication. I would also like to congratulate last year's Executive Board Members, who made 2018 a successful year for ACMAO with their hard work and devotion.

Dear members and friends, this year we are ready to continue to contribute towards the humanitarian work in Armenia and Arstakh, while alongside serving the Armenian community of Ontario. In the upcoming year, we will focus our efforts towards improving the wellbeing of our own community in Ontario through health education. We will also strengthen collaboration among our members and supporters by organizing social and networking events.

Dear members, our past successes hold us accountable to continue our mission in the present day, and for all the future days ahead. We believe that together we will work hard and we will continue to do our best to achieve our mission of improving the health and wellbeing of our people.

May 2019 be a successful and fruitful year for ACMAO.

Respectfully Yours,

Dr. Krikor Bebedjian  
President of Armenian Canadian Medical  
Association of Ontario (ACMAO)